

Ֆիզիկական անձի ազգանունը, անունը  
այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Ռուբենյանց տուն» ՍՊԸ այսուհետ՝ «Զբոսաշրջային օպերատոր», ի դեմս՝ տնօրեն Արտավազ Կահրամյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պայմանագրով Զբոսաշրջային օպերատորը՝ հանդիսանալով ՀՀ Կառավարության 2012թ.-ի դեկտեմբերի 27-ի թիվ 1691-Ն որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատոր, պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել հանգստի ապահովման համալիր ծառայություններ (այսուհետ՝ զբոսաշրջային փաթեթ) և/կամ հյուրանոցային տնտեսության օբյեկտի կողմից մատուցված ենթակա հյուրանոցային ծառայություններ (այսուհետ՝ հյուրանոցային փաթեթ) 33 և ԼՂԿ տարածքում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար: Հանգստի ապահովման ծառայության փաթեթների նախնական նկարագրությունը բերված է սույն պայմանագրի 1.3 կետում:

Զբոսաշրջային օպերատորի կողմից Հյուրանոցային փաթեթի իրացման դեպքում Զբոսաշրջային օպերատորը հանդես է գալիս որպես սույն պայմանագրի 1.3 կետում նշված հյուրանոցային տնտեսության օբյեկտի գործակալ՝ համաձայն Զբոսաշրջային օպերատորի և հյուրանոցային տնտեսության միջև կնքված գործակալության պայմանագրի և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 42-րդ գլխի դրույթների: 1.3 Ծառայությունները մատուցված են համարվում Պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների ժամկետի ավարտի պահին՝ եթե Պատվիրատուի կողմից Զբոսաշրջային օպերատորին հանգստի ավարտից հետո մեկ շաբաթյա ժամանակահատվածում չի ներկայացվել որևէ գրավոր առարկություն:

1.3 Փաթեթի տեսակը  Հյուրանոցային փաթեթ  Զբոսաշրջային փաթեթ

Ծառայությունից օգտվում են  Պատվիրատուն  ընտանիքի 1 անդամ  ընտանիքի 2 անդամ  ընտանիքի 3 անդամ  ընտանիքի 4 և ավելի անդամ

Հանգստի սկիզբը « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 201\_\_թ. ժամ \_\_\_\_\_ հանգստի ավարտ « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 201\_\_թ. ժամ \_\_\_\_\_

Հանգիստ \_\_\_\_\_ -ում

Նշել մարզը, քաղաքը, հյուրանոցի լրիվ անվանումը

Տրանսպորտային ծառայություններ  միակողմանի  երկկողմանի Տրանսպորտային միջոցի տեսակը \_\_\_\_\_  
Սնունդ  նախաճաշ  ճաշ  ընթրիք  հավելյալ սնունդ  
Այլ ծառայություններ  բուժում  գիղ  հավելյալ վճարովի ծառայություններ

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**2.1 Կատարողը պարտավոր է՝**

- 2.1.1 Ծառայությունը մատուցել անձամբ և պատշաճ որակով:
- 2.1.2 Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով, Պայմանագրի 1.2 կետում նշված ժամկետում,
- 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝
  - 2.2.1 պահպանել Պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները,
  - 2.2.2 չխախտել հասարակական կարգը, պահպանել իրդեհային անվտանգության կանոնները և կատարել ժամանակն ավարտ գործող օրենքների պահանջները,
  - 2.2.3 ժամանակավոր կցադրության և տարանջիկ վայրերում պատասխանատվություն կրել օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:
- 2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝
  - 2.3.1 ստանալ պայմանագրով և շրջապայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները,
  - 2.3.2 ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Զբոսաշրջային օպերատորի գործունեությանը:
  - 2.3.3 անձնակազմ անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքներին և գույքի պաշտպանության.

**3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը**

3.1 Պայմանագրի 1.3 կետում նշված ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) դրամ,

որից սոցիալական փաթեթի գծով տրամադրված միջոցներից ենթակա է վճարման \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) դրամ,

Պայմանագրում նշված հյուրանոցային տնտեսության կողմից մատուցված ենթակա ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) դրամ,

- 3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին Պայմանագրի 3.1 կետում նշված պայմանագրի գինը վճարվում է միանվագ՝ պայմանագրի կնքման պահին բանկային փոխանցման միջոցով, իսկ 33 Կառավարության կողմից սահմանված սոցիալական փաթեթի շահառուները վճարողները կատարում են անձնապես պարբերականությամբ՝ քայքայ ոչ ոչ քան պայմանագրի կնքման պահից մեկ տարվա ընթացքում (Պայմանագրի վերևի աջ մասի ամսաթիվը):
- 3.3 Պատվիրատուի կողմից առաջին վճարումը պետք է կատարվի Պայմանագրի կնքման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:
- 3.4 Սույն պայմանագրի գծով վճարված գումարները ենթակա են վերադարձման Պատվիրատուի գրավոր դիմումի հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Պատվիրատուն հրաժարվում է Պայմանագրով նախատեսված ծառայություններից և վերջինիս կողմից պահպանվել է Պայմանագրի 4.1 կետում սահմանված ժամկետները: Ընդ որում սոցիալական փաթեթի գծով վճարված գումարները վերադարձվում են բացառապես սոցիալական փաթեթի սպասարկման համար բանկում բացված հատուկ հաշվեհամարին գումարը փոխանցելու միջոցով:

**4. Կողմերի պատասխանատվությունը**

- 4.1 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ծառայություններից հրաժարվելու դեպքում Վերջին Զբոսաշրջային օպերատորին վճարում է տուգանք հետևյալ կարգով.
  - 4.1.1 ծառայությունների ընդհանուր արժեքի 50 տոկոսի չափով, եթե Պատվիրատուն պայմանագրից հրաժարվել է ոչ ոչ քան Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ: Ընդ որում, սոցիալական փաթեթի գծով վճարված գումարից տուգանքը հաշվարկվում է ոչ ոչ ավել քան սոցիալական փաթեթի գումարի 15 տոկոսը:
  - 4.1.2 Ծառայությունների ընդհանուր արժեքի 70 տոկոսի չափով, եթե Պատվիրատուն պայմանագրից հրաժարվել է 4.1.1 ենթակետում նշված ժամկետի խախտմամբ, կամ ընդհանրապես չի օգտվել Պայմանագրով նախատեսված ծառայություններից և Հյուրանոցային փաթեթի դեպքում առկա է հյուրանոցային տնտեսության օբյեկտի գրավոր ծանուցումը Զբոսաշրջային օպերատորին Պատվիրատուի կողմից հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին: Ընդ որում, սոցիալական փաթեթի գծով վճարված գումարից տուգանքը հաշվարկվում է ոչ ավել քան սոցիալական փաթեթի գումարի 40 տոկոսը:

**5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագրի կնքումից հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհամարյան են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**6. Վեճերի լուծման կարգը**

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ 33 օրենսդրությամբ սահմանված կարգով:

**7. Եզրակակիչ դրույթներ**

- 7.1 Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
- 7.2 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմն ունի մոտ գտնվում է Պայմանագրի մեկական օրինակ:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները Փոխանցման հաշիվ**

Զբոսաշրջային օպերատոր		«Ռուբենյանց տուն» ՍՊԸ			
Հասցե		ՀՀ, ք. Երևան, Ադոնցի 3/24			
Հ/Հ		1150005631280100			
Բանկ		«Հայփոփոխանակ» ՓԲԸ			
Հ/Հ		07906388			
Պատվիրատու					
Հասցե					
Աճճճճճճ					
Աշխատանքի վայր					
Աշխատանքի վայրի հասցե					
Կոնտակտներ					
NN	Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
1	Հանգստի կազմակերպում		ուղեգիր		
Գումարը բառերով					